ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թվականի N 49-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով ***որոշում եմ՝***

Գումարել Ալավերդի համայնքի ավագանու հերթական նիստ՝ 2020 թվականի փետրվարի 27-ին, ժամը 16.00-ին, համայնքապետարանի վարչական շենքում՝ հետևյալ օրակարգով.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 27-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

2. Ալավերդի համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան և Ալավերդի համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված և 2019 թվականին իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները հաստատելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

3. Ալավերդի համայնքի ավագանու 20.01.2020թ.N 2-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

4. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց, N 75/3 հասցեում գտնվող հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

5. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ քաղաք Ալավերդի, Սողոմոն Թեհլերյան փողոց, N 1/2 հասցեում գտնվող հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

   (Զեկ. Ս. Խեչումյան)

6. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/33-49/3 հասցեում գտնվող հողամասն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

8. Հայաստանի Հանրապետության Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող, Հաղպատ գյուղի տարածքում գտնվող կիսակառույց շինության և զբաղեցրած հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքի մրցույթ կայացնելու թույլտվություն տալու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ակներ թաղամասի վարչական սահմաններում գտնվող 0.016 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխադրելուն հավանություն տալու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ակներ թաղամասի վարչական սահմաններում գտնվող 0.07865 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխադրելուն հավանություն տալու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին թաղամասի վարչական սահմաններում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխադրելու և հետագայում ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

12. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

(Զեկ. Ս. Խեչումյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. փետրվարի 21
ք. Ալավերդի